ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան «19» «փետրվարի» 2018թ.
ժամը 11 00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու **(ԳՊ/ԳԱՊ)**	Ա.Առաքելյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)**	Ա.Մուրադյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)**	Ա.Հայրապետյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)**	Գ.Ասատրյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)**	Ս.Գրիգորյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող **(ԳՊ/ՄՀմ)**	Թ.Հայրապետյան

1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ա.Առաքելյան)

1.1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018 թվականի փետրվարի 19-ին, ժամը 11:00-ին, «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲ վարչական շենքում, ք.Երևան, օդանավակայան «Զվարթնոց»-2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի փետրվարի 14-ին, ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Ա.Առաքելյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ իր կողմից հաստատված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲ ընկերության meteo@arminco.com էլեկտրոնային փոստի հասցեին: 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Ա.Առաքելյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ 1-ին և 2-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչել «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին:

4.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՋԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.4. *«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ* միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) _____ Ա.Առաքելյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Ա.Մուրադյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Ա.Հայրապետյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Գ.Ասատրյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ /Ս.Գրիգորյան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) _____ Թ.Հայրապետյան